

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

### ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016 թվականի Փետրվարի 18-ին կայացած նիստի

#### Օրակարգ.

1. 2015-2016 ուստարվա հեռակա ուսուցման մագիստրական թեզի պաշտպանության հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը:  
/զեկ. հանձնաժողովի նախ. պրոֆ Գ.Կարապետյան, Ս.Հովհաննիսյան/
2. Գոհար Գուրգենի Ղամբարյանի “Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացում” ատենախոսական թեզի քննարկում:  
/զեկ. Գ.Ղամբարյան/
3. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասիստենտ Ա.Վ.Բոյնագրյանին դոցենտի շնորհում:
4. Ընթացիկ հարցեր

*ԼՄԵՑԻՆ* - մագիստրական թեզի պաշտպանության հանձնաժողովների նախագահների հաղորդումը (զեկուցումը կցվում է):

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ*՝

*Մ.Ա.Գրիգորյանը* – Նա առաջարկեց հաստատել հաշվետվությունները: Իր խոսքում նա բարձր գնահատեց ամբիոններում տարված աշխատանքը մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ: Հատուկ ուշադրություն հրավիրեց ուսանողների ինքնուրույնության և աշխատանքների ներկայացման ուղղությամբ:

*ՈՐՈՇԵՑԻՆ* – հաստատել 2015-2016 ուստարվա հեռակա ուսուցման մագիստրական թեզի պաշտպանության հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը:

*ԼՄԵՑԻՆ* – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Գոհար Գուրգենի Ղամբարյանի գիտական հաղորդումը “Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացում” ատենախոսական թեմայով: Գ.Ղամբարյանը մանրամասն ներկայացրեց ատենախոսության

թեմայով իր կողմից կատարած աշխատանքները և ներկայացրեց համապատասխան եզրակացությունները:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս.Ռ.Սուվարյանը* - իր ելույթում փորձեց ճշգրտել <Աճի բևեռներ> և <Զարգացման բևեռներ> տերմինների գործածումը և վերջիններիս կիրառման ոլորտների տարբերությունը: Խսքի վերջում, գիտական աշխատանքը բարելավելու միտումով, Ս.Սուվարյանն առաջարկեց հատուկ շեշտադրություն կատարել <Աճի տեսություն> և <Կայուն զարգացում> համակարգերի ոլորտին:

**Ռ.Ս.Մինասյանը** - Ցանկալի կլիներ եզրակացության հատվածում նշվել կիրառվելիք արդյունաբերության ճյուղերը: Ռ.Մինասյանը կարևորեց հայցորդի մասնակցության չափը աշխատանքն իրականացնելիս:

**Գ.Փ.Ալեքսանյան** - իր խոսքում նշեց, որ կարևոր է հստակ ձևակերպել <քաղաքացիների ազդեցության ներուժ> և <մարդաշատություն> սկզբնաբան հարցերը:

**Ռ.Ս.Մովսեսյան** - նշեց, որ ներկայացված գիտական աշխատանքը մանրակրկիտ ուսումնասիրման արդյունք է: Առաջարկեց երաշխավորել պաշտպանության:

**Մ.Գ.Մանասյան** - իր ելույթի սկզբում նշեց, որ աշխատանքը ճիշտ է ընտրված ՀՀ-ի տարածաշրջանի համար: Խոսքում Մ.Մանասյանն առաջարկեց հստակեցնել աշխատանքում առկա դինամիկան, քանի որ վերջինս բարդ է ներկայացված:

Բոլոր հարցերին Գ.Գ.Ղամբարյանը տվեց հանգամանալից պատասխաններ:

*ՈՐՈՇԵՑԻՆ* - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Գոհար Գուրգենի Ղամբարյանի գիտական հաղորդումը “Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացում” վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

*ԼՄԵՑԻՆ* - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասիստենտ, երկրաբանական գիտությունների թեկնածու Արթուր Վլադիմիրի Բոյնագրյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ* – Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Ա.Վ.Բոյնագրյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Վ.Պ.Վարդանյանն առաջարկեց փակ (զաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ նախագահ՝ Շ.Վ.Խաչատրյան, անդամներ՝ Գ.Փ.Ալեքսանյան և Հ.Ի.Մովսիսյան:

ԼՍԵՑԻՆ – հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը փակ (զաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 33-ը: Արթուր Բոյնագրյանի դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 31-ը, դեմ՝ 2, անվավեր՝ չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – բաց քվեարկությամբ, միաձայն հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (զաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և երաշխավորեց Արթուր Վլադիմիրի Բոյնագրյանին շնորհելու դոցենտի գիտական կոչում:

#### ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Ռեզիդնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոնի վարիչ, դոց.Շ.Վ.Խաչատրյանի դոկտորական ատենախոսական աշխատանքի վերնագրի և խորհրդականի նշանակման հարցը:

Որոշեցին - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ռեզիդնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոնի վարիչ, դոց.Շ.Վ.Խաչատրյանի դոկտորական ատենախոսական աշխատանքի վերնագիր հաստատել <ՀՀ մագնեզիումասիլիկատային ապարների և ցեոլիտների արդյունավետ կիրառման ուղղությունները> և խորհրդատու նշանակել Գ.Պ.Փիրումյանին:

ԼՍԵՑԻՆ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ դոց.Գ.Վ.Մարկոսյանի հաղորդումը նույն ամբիոնի ասպիրանտ Աննա

Լևոնի Բայրամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի փոփոխման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Աննա Լևոնի Բայրամյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել “Երկրամագնիսական դաշտի տարածաժամանակային առանձնահատկությունները՝ պայմանավորված երկրակեղևի ժամանակակից շարժումներով (Արարատյան սեյսմափորձադաշտի օրինակով) վերնագրով:

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Շ.Պոտոսյանի հաղորդումը Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ամբիոնի հայցորդ Աննա Արամայիսի Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ամբիոնի հայցորդ Աննա Արամայիսի Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել “ՀՀ հատուկ պիպանվող տարածքների ռեկրեացիոն բնօգտագործման երկրաբանական սկզբունքները” վերնագիրը և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների թեկնածու Լևոն Մարտիրոսյանին:

ԼՍԵՑԻՆ - Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ դոց.Ռ.Ս.Մովսեսյանի հաղորդումը ասպիրանտ Վահան Մհերի Մանուկյանի ատենախոսության թեմայի վերնագրի ճշգրտման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի ասպիրանտ Վահան Մհերի Մանուկյանի ատենախոսության թեմայի վերնագիրը հաստատել «Հանքային դաշտերի երկրաբանա-երկրաֆիզիկական բնութագրերի վերլուծությունը պղինձ-պորֆիրային հանքակուտակների գնահատման նպատակով (ՀՀ տարածքի օրինակով)» (1.ԻԴ 01.08 «Երկրաֆիզիկա, օգտակար հանածոների որոնման երկրաֆիզիկական մեթոդներ», 2. ԻԴ 01.01 «Ընդհանուր երկրաբանություն»):

ԼՍԵՑԻՆ – Մեթոդիսոցիալի նախագահ պրոֆ.Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը Սերվիսի ամբիոնի դոց.Տ.Ա.Սարգսյանի և դասախոս Ի.Վ.Սահակյանի <Ծառայությունների

ոլորտի հասկացությունների և տերմինների համառոտ բացատրական բառարան>-ի տպարության վերաբերյալ:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ* – պրոֆ.Թ.Գ.Վարդանյանը, դոց.դոց.Ս.Ռ.Սուվարյանը, Ռ.Ս.Սովետյանը:

Նշեցին, որ բառարանն ունի կարևոր նշանակություն <Սերվիս> մասնագիտության ուսանողների համար:

*ՈՐՈՇԵՑԻՆ* - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի դոցենտ Տիգրան Արտավազդի Սարգսյանի և դասախոս Իրինա Վանոյի Սահակյանի “Ծառայությունների ոլորտի հասկացությունների և տերմինների համառոտ բացատրական բառարան”-ը երաշխավորել ներկայացնելու տպագրության:

*ԼՍԵՑԻՆ* – Մեթոդիտորհրդի նախագահ պրոֆ.Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի ասիստենտ Վ.Ս.Սուրադյանի <Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով դասընթացի դաշտային պրակտիկա> ուսումնամեթոդական ուղեցույցը տպարության երաշխավորելու վերաբերյալ:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ* – դոց.դոց.Ս.Ա.Գրիգորյանը, Ս.Ռ.Սուվարյանը: Նշեցին, որ ուսումնամեթոդական ուղեցույցն ունի կարևոր նշանակություն <Աշխարհագրություն> և <Քարտեզագրություն և կադաստրային գործ> մասնագիտությունների ուսանողների ուսումնական (դաշտային) պրակտիկաների կազմակերպման համար:

*ՈՐՈՇԵՑԻՆ* - Վ.Ս.Սուրադյանի <Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով դասընթացի դաշտային պրակտիկա> ուսումնամեթոդական ուղեցույցը երաշխավորել ներկայացնելու տպագրության:

Խորհրդի նախագահ

Ս.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան